

ճառ բազում բարեաց, զոր յայլ աշխարհ վասն ահի եւ ամօթոյ ոչ թողուն ծնօղք յա-
 165 ուջ գալ անմեղ տղայոց, այլ դեղօք եւ պէս-
 պէս չարիւք սպանանեն զծնեալս կամ չտան
 ծնանիլ:

ՄԱՍՆԱՒՈՐ ԻՆՉ ՊԱՅՄԱՆՔ ՔԱՂԱՔԻՆ

Պատմեմ ձեզ եւ այլ սքանչելիս վասն
 քաղաքին Վէնէտիկու, որ յոյժ հիացունմ
 170 տալ լսողաց. բայց աղաչեմ զընթերցողս՝
 չձանձրանալ: Եւ թէ որպէս հրաշիւք հիմնա-
 ցեալ եւ կառուցեալ է մեծամեծ վիմօք եւ
 լեռնանման քարօք ի վերայ ծովու. որպէս
 կամուրջք ի վերայ գետոց, եկեղեցիք, տներն
 175 եւ ամէն եարուքն ծովու մէջ է. եւ բոլորն
 ջուր, նա եւ փողոցնին ջուր է. եւ թէ կա-
 միս ուրեք կամ առ դրացիս գնալ, փէրէմով
 պիտիս երթալ: Այլ եւ այս սքանչացնէ զտե-
 սողս, զի ծովս այս երկու անգամ երթայ եւ
 180 գայ, յաւելու եւ նուազի նման Սելհովամ
 գետոյն, որ ի ժամանակս Նսայիա մարգարէի.
 սապէս եւ սա յեանուց մինչեւ յառաւօտն
 սկսնու աւելուլ մարգարոյ մի եւ յառաւօտէ
 մինչ ի յերիկուն նուազի եւ թերանայ. եւ
 185 այնպէս սրընթաց երթալ եւ գայ արագ որ-
 պէս գետ ակներեւ ամենեցուն: Եւ այսու
 պատճառաւ ոչ ոք ի թագաւորաց կարաց առ-
 նուլ զքաղաքս եւ ոչ կարէ, զի միապէս չէ.
 երբեմն ծով է եւ երբեմն աղտաղտուկ. զի

170 զընթերցողս: — 177 ուրէք: — 181 յՆսայիա:
 — 189 տաղտաղտուկ: